ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳԱՖԷՍՃԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ, ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքով սահմանված հարկային, մաքսային և պարտադիր գծով արտոնությունների կիրառման իմաստով՝

2) համալիրի կառուցման և համալիրի գործունեության իրականացման համար «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամին իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումն ազատվում են ավելացված արժեքի հարկից:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված համալիրի կառուցման հետ կապված արտոնությունները գործում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվան անմիջապես հաջորդող 5 տարիների ընթացքում:

Սույն հոդվածի համաձայն՝ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամին ավելացված արժեքի հարկից ազատված ապրանքները մատակարարող կամ ծառայություններ մատուցող անձինք այդ ապրանքների և ծառայությունների համար հարկային հաշիվ դուրս չեն գրում (լրացնում են սահմանված կարգի այլ հաշվարկային և վճարային փաստաթղթեր), իսկ իրենց մատակարարների ներկայացրած հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ ~~մաքսային~~ հայտարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները միացնում են արտադրության և շրջանառության ծախսերին: ~~Այդ անձանց կողմից հարկային հաշիվ լրացվելու դեպքում հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը վճարվում է բյուջե՝ սահմանված ընդհանուր կարգով:~~

Սույն հոդվածում նշված արտոնությունների կիրառման համար հիմք են ընդունվում իրականացված գործարքների կատարումը հիմնավորող սահմանված կարգի փաստաթղթերը (պայմանագիր, հաշվարկային և վճարային փաստաթղթեր, համապատասխան ~~բեռնամաքսային~~ հայտարարագիր և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգին համապատասխան՝ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի դուրս գրած տեղեկանքը: Նշված տեղեկանքը լրացվում է 3 բնօրինակից, որի մեկ օրինակը տրվում է ապրանքներ մատակարարող կամ ծառայություններ մատուցող անձանց (ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային կամ հարկային մարմին), երկրորդ օրինակը պահվում է «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամում, իսկ երրորդը ներկայացվում է ~~Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն~~ հարկային մարմին՝ մինչև տեղեկանքի դուրսգրման ամսական հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Ավելացված արժեքի հարկից ազատված և ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքների (գործառույթների) գծով ավելացված արժեքի հարկի հաշվառումն իրականացվում է ~~«Ավելացված արժեքի հարկի մասին»~~

~~Հայաստանի Հանրապետության օրենքով~~ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 5. Սույն օրենքի կիրառման վերաբերյալ~~՝ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ~~ պարզաբանումները օրենքով սահմանված կարգով տրամադրում է հարկային կամ մաքսային մարմինը: